

Օգտագործված գրականություն

1. Ton Wilthagen, Frank Tros, *The Concept of »Flexicurity«: A new approach to regulating employment and labour markets*, <http://www.nvf.cz/assets/docs/80401adfb0953f74d581d0c0a71f37359-0/youth-flexicurity.pdf>
2. Schmid G., *Social Risk Management through Transitional Labour Markets p. 59*, <http://www.policy-network.net/uploadedFiles/Publications/Publications/Schmid-final.pdf>
3. *Growth, competitiveness, employment. The challenges and ways forward into the 21st century, White Paper, COMMISSION OF THE EUROPEAN COMMUNITIES*, http://europa.eu/documentation/official-docs/white-papers/pdf/growth_wp_com_93_700_parts_a_b.pdf
4. *Partnership for a new organization of work, Green Paper, European Commission, 1997*, http://www.ab.gov.tr/files/ardb/evt/1_avrupa_birligi/1_6_raporlar/1_2_green_papers/com1997_green_paper_partnership_for_a_new_organization_of_work.pdf
5. Jeremy Rifkin, *THE END OF WORK. The Decline of the Global Labor Force and the Dawn of the Post-Market Era*, http://monoskop.org/images/1/1f/Rifkin_Jeremy_The_End_of_Work.pdf
6. Տեղեկանք-հիմնավորում, «Չբաղվածության մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6358&Reading=0>
7. «Չբաղվածության մասին» հի օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» ՀՀ կառավարության 17 ապրիլի 2014 թվականի N 534-Ն Որոշում, <http://www.artis.am/documentview.aspx?docID=90571>
8. «Չբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի մոնիթորինգի եվ գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության, 11 սեպտեմբերի 2014 թվականի N 981-Ն Որոշում, <http://www.artis.am/documentview.aspx?docID=92858>
9. ՀՀ ԱՎԾ, Վիճակագրական բառարան, Ֆորմալ եւ ոչ ֆորմալ զբաղվածության վերլուծությունը, <http://www.amstat.am/am/?nid=486#2>
10. «Չբաղվածության մասին» ՀՀ օրենք, 3րդ ված 4, www.parliament.am
11. ՀՀ ԱՎԾ, Վիճակագրական բառարան, <http://www.amstat.am/am/?nid=486#2>
12. «Աշխատաշուկայի հետազոտման եւ կանխատեսման աշխատանքների կազմակերպում» ծրագրի շրջանակներում իրականացված «Գործատուների ընտրանքային ուսումնասիրություն», 2եկույց, 2014, էջ 25, <http://employment.am/am/6/free.html>

Բանալի բառեր՝

հանդուրժողականություն, ռիսկերի գրանցամատյան, ռիսկի պրոֆիլ, ռիսկերի ցուցակիչ:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման պայմաններում բանկային խմբի (այսուհետ՝ հումբ) ռիսկերի կառավարման միասնական համակարգին համբի ֆինանսական կազմակերպությունների (այսուհետեւ՝ հՖԿ) ինտեգրվելը պետք է իրականացվի նրան բնորոշ ռիսկերի միանմանության հաշվին, որն ապահովվում է նրա գործառնությունների պրոֆիլների նմանությամբ, ռիսկերի կառավարման միատեսակ գործընթացների ներդրման հնարավորությամբ, յուրաքանչյուր կազմակերպությունում բավարար ենթակառուցվածքի առկայությամբ, ինչպես նաեւ համբում անմիջական վերահսկողության առկայության միջոցով այդ գործընթացների ներդրումը վերահսկելու հնարավորությամբ: Այն կազմակերպությունները, որոնց ինտեգրումը ռիսկերի կառավարման միասնական համակարգի մեջ դժվարանում է թվարկված գործոններից որեւէ մեկի բացակայությամբ, դասվում են համբի ոչ ֆինանսական կազմակերպությունների կարգին: Ինչպես նաեւ ռիսկերի կառավարման համակարգին ֆինանսական կազմակերպությունների ինտեգրումն անհրաժեշտ է իրականացնել հետեւյալ սկզբունքների հիման վրա^{1,2}.

- Ինչպես նաեւ ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը գործառնական համակարգման շրջանակներում իրականացնում է հՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների մեթոդաբանական ղեկավարումը:

- Ինչպես նաեւ ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը համակարգող ստորաբաժանումների մեթոդաբանական ղեկավարումը:
- Ինչպես նաեւ ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը համակարգող ստորաբաժանումների մեթոդաբանական ղեկավարումը:

- Ինչպես նաեւ ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը համակարգող ստորաբաժանումների մեթոդաբանական ղեկավարումը:
- Ինչպես նաեւ ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը համակարգող ստորաբաժանումների մեթոդաբանական ղեկավարումը:

- Ինչպես նաեւ ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը համակարգող ստորաբաժանումների մեթոդաբանական ղեկավարումը:
- Ինչպես նաեւ ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը համակարգող ստորաբաժանումների մեթոդաբանական ղեկավարումը:

- Ինչպես նաեւ ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը համակարգող ստորաբաժանումների մեթոդաբանական ղեկավարումը:
- Ինչպես նաեւ ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը համակարգող ստորաբաժանումների մեթոդաբանական ղեկավարումը:

- Ինչպես նաեւ ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը համակարգող ստորաբաժանումների մեթոդաբանական ղեկավարումը:
- Ինչպես նաեւ ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը համակարգող ստորաբաժանումների մեթոդաբանական ղեկավարումը:

- Ինչպես նաեւ ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը համակարգող ստորաբաժանումների մեթոդաբանական ղեկավարումը:
- Ինչպես նաեւ ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը համակարգող ստորաբաժանումների մեթոդաբանական ղեկավարումը:

● Ռիսկերի կառավարման համակարգի մեթոդաբանական գործառնություններից, որոնք համբի ռիսկերի կառավարման համակարգի կողմից կատարվում են համբի եւ նրա կազմակերպությունների մակարդակով ռիսկերի կառավարման նկատմամբ ինտեգրված մոտեցում ստեղծելու շրջանակներում:

● Ռիսկերի կառավարման համակարգի գործառնական այն գործառնություններից, որոնք համբի ռիսկերի կառավարման համակարգի կողմից իրականացվում են համբի եւ նրա կազմակերպությունների ռիսկերի գնահատման, մոնիթորինգի ու ռիսկերի մակարդակի վրա ազդեցության գործընթացների շրջանակներում:

Ռիսկերի կառավարման համակարգի ռազմավարական գործառնությունը⁵ կարող են հանդիսանալ՝

● Ռազմավարական ծրագրավորման եւ բյուջետավորման գործընթացներին մասնակցելը: Խմբի ռիսկերի կառավարման համակարգը պետք է օժանդակի կառավարչական որոշումների ընդունմանը՝ ստուգելով ընդունվող որոշումների վրա ազդող տեղեկատվությունը, ինչպես նաեւ նույնականացնելով եւ իրազեկելով ընդունվող որոշումների ու ռազմավարական նախաձեռնությունների հետ կապված հիմնական ռիսկերի մասին:

● Խմբի ռազմավարությունը, որն իբրեւ հիմնական բաղադրատարրեր ներառում է առաքելությունը, տեսլական ու ռազմավարական նպատակները եւ ռիսկերի կառավարման համակարգի կառուցման հիմքը:

● Ռիսկի այն առավելագույն թույլատրելի մակարդակի սահմանումը, որը կարող են ընդունել ումքը եւ նրա կազմակերպությունները: Ռիսկի առավելագույն թույլատրելի մակարդակը, որը կարող է ընդունել կազմակերպությունը, որոշվում է նախ եւ առաջ նրա ֆինանսական բնութագրերով, ինչպես նաեւ բաժնետերերի, կարգավորող մարմինների ու ընդունվող ռիսկի չափը սահմանափակելու խնդրով շահագրգիռ այլ կողմերի պահանջներով:

● Ռազմավարական ծրագրավորման եւ կառավարման գործընթացում ռիսկի ախորժակի սահմանումը Բանկի ղեկավարության հետ համատեղ:

● Ռիսկի ախորժակը բնորոշում է այն ընդունելու՝ կազմակերպության պատրաստակամությունը, որն արտացոլվում է կազմակերպության ռազմավարության մեջ եւ հա-

մաձայնեցվում նրա ռազմավարական նպատակների քանակական ու որակական բնութագրերի հետ: Խմբի ռիսկի ախորժակը սահմանվում է՝ ռիսկերի այն տեսակների համար, որոնք կարելի է գնահատել քանակապես՝ խմբի սեփական կապիտալի բաժնեմասի նպատակային մեծության տեսքով, որը կարող է օգտագործվել դրանց հետ կապված կորուստները ծածկելու համար. ռիսկերի այն տեսակների համար, որոնք բարդ են կամ անհնար է գնահատել քանակապես՝ ռիսկերի կառավարման սկզբունքների տեսքով:

● Ռիսկի նկատմամբ հանդուրժողականության սահմանումը, որը բնորոշում է այն փաստական ցուցանիշներից թույլատրելի շեղման մեծությունը, որոնք արտացոլում են խմբի ռազմավարությամբ սահմանված նպատակային մեծություններից խմբի առանձին ռազմավարական նպատակների իրականացումը: Զաղաքականության նպատակների համար՝ որպես ռիսկի նկատմամբ հանդուրժողականության քանակական արտահայտություն, պետք է ընդունել սահմանված նպատակային մեծություններից ռիսկի եւ եկամտաբերության հարաբերակցության ցուցանիշների շեղման թույլատրելի մեծությունը:

● Խմբի ամբողջ ռազմավարության եւ ԽՖԿ-ների ռազմավարական առանձին նախաձեռնությունների գնահատումը, որը սահմանվում է ռիսկի ախորժակի եւ ռիսկի հանդուրժողականության համապատասխանության տեսանկյունից:

● Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության մշակումը, որը սահմանում է ռիսկերի կառավարման նպատակները, խնդիրներն ու սկզբունքները, ռիսկերի կառավարման ընթացակարգերն ու կազմակերպական կառուցվածքը, լիազորությունների եւ պատասխանատվության բաշխումը խմբի ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում:

● Ռիսկերի կառավարման մշակույթի ստեղծումը, որը հնարավոր է խմբի բոլոր աշխատակիցներին ռիսկերի կառավարման նպատակներին ու արժեքներին հարողակից դարձնելու միջոցով, ինչպես նաեւ ռիսկերի կառավարման նորմերն ու չափորոշիչները սահմանելու եւ դրանց նկատմամբ հսկողություն իրականացնելու միջոցով:

ՀՏԴ 336.71

ԲԱՆԿԱՅԻՆ ԽՄԲԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՎԵԼԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հարություն
ՉԱԲՈՅԱՆ

ԵՊՀ

Կառավարման եւ
գործարարության
ամբիոնի դոցենտ,
տեխնիկական
գիտությունների
թեկնածու

harutyunzakoyan@ysu.am

● Խմբի ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործումը: Խմբի ռիսկերի կառավարման համակարգը հարկ է կատարելագործել այդ բնագավառի առաջավոր փորձերին, ինչպես նաև կարգավորող մարմինների և շահագրգիռ այլ կողմերի պահանջներին նրա համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Խմբի ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում պետք է նույնականացվեն և գնահատվեն Խմբի կողմից ընդունվող ռիսկերն ու սահմանվեն Խմբի ու նրա կազմակերպությունների գործունեության այն բոլոր ոլորտները (ուղղությունները), որոնք կարող են ենթարկվել յուրաքանչյուր բացահայտված ռիսկի, ինչպես նաև համակարգվեն ու նկարագրվեն ռիսկերը Խմբի ռիսկերի միասնական գրանցամատյանի տեսքով:

Ռիսկերի գրանցամատյանում յուրաքանչյուր ռիսկի համար պետք է արտացոլվեն՝ ռիսկի տեսակը, ռիսկի համառոտ բնութագրերը, ռիսկի գործոնները, ռիսկի ազդեցության աստիճանը և/կամ հնարավոր վնասը ռիսկի իրացումից, ռիսկի օբյեկտը (Խմբի և նրա կազմակերպությունների գործունեության այն ոլորտները), որոնք ենթակա են տվյալ ռիսկին, դրա պատասխանատուին: Ռիսկի գրանցամատյանն ապահովում է Խմբի և նրա կազմակերպությունների բոլոր ռիսկերի ներկայացման լիակատարությունն ու ստուգությունը, և միաժամանակ՝ կանոնավոր կերպով վերանայում է ու լրացվում:

Ռիսկերի համալիր կառավարումը Խմբի ռիսկերի կառավարման համակարգի կարելու խնդիրն է, որի լուծման գործընթացում պետք է բացահայտվեն տարբեր ռիսկերի փոխադարձ կապերը, ինչպես նաև գնահատվի տվյալ փոխադարձ կապերի ազդեցությունը Խմբի և նրա կազմակերպությունների գործունեության վրա: Խմբի ռիսկերի կառավարման գործընթացում պետք է քննարկվեն հետևյալ փոխադարձ կապերը՝ տարբեր ռիսկերի միջև ռիսկի մի տեսակի շրջանակներում, ռիսկի տարբեր տեսակների միջև, ինչպես նաև Խմբի տարբեր կազմակերպություններին բնորոշ ռիսկերի միջև: Ռիսկերի փոխադարձ կապերը հաշվի են առնվում Խմբի միագումար ռիսկի ցուցանիշները հաշվարկելիս: Ռիսկերի փոխադարձ կապերի հաշվարկներում արտացոլման մեթոդաբանությունը մշակվում է՝ հաշվի առնելով հասանելի տեղեկատվությունը և տեխնոլոգիաների զարգացման մակարդակը Խմբի առանձին կազմակերպություններում:

Խմբի և նրա կազմակերպության վրա ազդող ռիսկի գործոնների վերլուծությունն ու մոնիթորինգը անցկացվում են Խմբի կողմից ընդունվող ռիսկերն ու դրանց աղբյուրներն առավել լիովին սահմանելու նպատակով: Խմբի ռազմավարության և Խմբի առջև դրված նպատակների իրականացման վրա ներգործելու ընդունակ ռիսկի հիմնական գործոնների թվին են դասվում՝

● Արտաքին գործոնները, այդ թվում՝

✓ տնտեսական գործոնները, որոնք ներառում են ապրանքների ու ֆինանսական գործիքների գների տատանումները, ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը, կապիտալի արժեքը, մրցակցության մակարդակի մեծանալը, պայմանագրային պարտավորությունների մեջ գտնվող կազմակերպությունների ֆինանսական կայունությունը,

✓ քաղաքական գործոնները, որոնք ներառում են քաղաքական վարչակարգերի փոխվելը, օրենսդրական համակարգը, տնտեսական և քաղաքական մյուս միջոցները, որոնք ընդունակ են էական ազդեցություն գործել Խմբի և/կամ նրա կազմակերպությունների գործունեության վրա առանձին երկրներում,

✓ սոցիալական գործոնները, որոնք ներառում են ժողովրդագրական իրավիճակի փոփոխվելը, սոցիալական անկայունությունը, արմատական փոփոխությունները բնակչության եկամուտների մակարդակներում և/կամ սպառման կառուցվածքում, դ) տեխնոլոգիական գործոն-

ները, որոնք ներառում են էական փոփոխությունները օգտագործվող տեխնոլոգիաների մակարդակում, իսկ վերջիններս էլ կարող են ամբողջ Խմբի կամ նրա առանձին կազմակերպությունների մրցակցային դիրքի փոփոխություններ հարուցել,

✓ բնական գործոնները, որոնք ներառում են հեղեղումները, հրդեհները կամ երկրաշարժերը, որոնք կարող են վնաս հասցնել Խմբի կազմակերպությունների նյութական ակտիվներին կամ անձնակազմին:

● Ներքին գործոնները, այդ թվում՝

✓ մարդկային գործոնները, որոնք ներառում են ռիսկի գործոնները՝ կապված անձնակազմի հետ, այդ թվում աշխատակիցների կողմից խարդախության հետ, որակյալ անձնակազմի պակասի, մոտիվացիայի մակարդակի նվազման և/կամ աշխատանքային օրենսդրության մեջ աննպաստ փոփոխությունների հետ, ինչպես նաև կողմնակի անձանց ազդեցության գործոնները՝ խարդախ գործառնությունների, աուտորսիսիզի դեպքում սպասարկումների անբավարար որակի գործոնները,

✓ գործարար գործընթացների գործոնները, որոնք այդ թվում ներառում են ռիսկի այն գործոնները, որոնք կապված են գործարար գործընթացներում սխալների հնարավոր առաջացման, ինչպես նաև գործարար գործընթացները վերակառուցելիս փոփոխությունների անարդյունավետ կառավարման հետ,

✓ համակարգերի գործոնները, ներառյալ ինչպես տեղեկատվական տեխնոլոգիաների գործոնները, այդ թվում՝ օգտագործվող տեղեկատվական համակարգերի անբավարար արդյունավետության և/կամ անհուսալիության, տեղեկատվական անվտանգության խախտումների, գործարարության անընդհատության նկատմամբ սպառնալիքների հետ, այնպես էլ ենթակառուցվածքի գործոնները, որոնք ներառում են ենթակառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտության հետեւանքով մքի ծախսերի ավելանալու գործոնները:

Ռիսկի ցուցանիշների համակարգը, որը թույլ է տալիս առավել լիովին բնութագրել Խմբի և նրա կազմակերպությունների կողմից ընդունվող ռիսկերի մեծությունը, պետք է մշակվի Խմբի և նրա առանձին կազմակերպությունների ռիսկերի պրոֆիլի հիման վրա՝ հաշվի առնելով մատչելի տեղեկատվությունը և Խմբի առանձին կազմակերպություններում տեխնոլոգիաների զարգացման մակարդակը: Խմբի ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում պետք է մշակվեն ռիսկերի ցուցանիշների հաշվառման մեթոդակարգերը, այսինքն՝ օժանդակություն ցույց տրվի մշակված մեթոդակարգերը Խմբի կազմակերպություններում հարմարեցնելիս և ներդնելիս: Ընդունվող ռիսկերի չափի վրա սահմանափակումներ հաստատելու շրջանակներում սահմանվեն ռիսկի ցուցանիշների նպատակային ու կրիտիկական մեծություններն ըստ ռիսկի առանձին տեսակների և պորտֆելների, ինչպես նաև մշակվեն և վերահսկվեն էսկալացիայի սցենարների կատարումը սահմանված սահմանափակումների խախտման դեպքում: Սահմանափակումների հաստատման միջոցով է տեղի ունենում Խմբի և նրա կազմակերպությունների ռիսկի նպատակային պրոֆիլի սահմանում:

Խմբի ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում սահմանվում և/կամ մշակվում են այն ստանդարտ գործիքները, որոնք կարող են օգտագործվել ընդունվող ռիսկերի ազդեցությունը նվազեցնելու համար: Այդ գործիքները մշակվում են Խմբի կազմակերպությունների համապատասխան ստորաբաժանումների օժանդակությամբ: Խմբի ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում սահմանվում են ռիսկերի կառավարում իրականացնելիս Խմբի ստորաբաժանումների և նրա կազմակերպությունների փոխգործակցության սկզբունքները և ապահովվում դրա արդյունավետ համակարգի կառուցումը: Խմբի ռիսկերի կառավարման համակարգի շրջանակ-

ներում սահմանվում են հմբի մակարդակով ռիսկերի կառավարման գործընթացները եւ հմբի կազմակերպություններում ռիսկերի կառավարման տիպային գործընթացները. ապահովվում է այդ գործընթացների կանոնակարգումը ներքին նորմատիվային փաստաթղթերով եւ վերահսկողությունը այդ փաստաթղթերի պահանջների պահպանման նկատմամբ: հմբի ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում սահմանվում են հմբի եւ հՖԿ-ների ռիսկ-հաշվետվության ձեւաչափերը, տեղեկատվության հավաքման, մշակման ու փոխանակման կարգը ռիսկ-հաշվետվություն կազմելիս: հմբի ռիսկերի կառավարման համակարգն ապահովում է ռիսկերի տարբեր տեսակների կառավարման համարժեք չափորոշիչների եւ մեթոդակարգերի օգտագործումը հմբի բոլոր կազմակերպություններում եւ վերահսկողություն իրականացնում դրանց կիրառման ճշտության եւ լիակատարության նկատմամբ: հմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը վերահսկողություն է իրականացնում ներքին նորմատիվային այն փաստաթղթերին ռիսկերի կառավարման չափորոշիչների համապատասխանության նկատմամբ, որոնք կարգավորում են հմբի առանձին կազմակերպությունների մակարդակով ռիսկերի կառավարումն այդ փաստաթղթերի համաձայնեցման գործընթացում: հմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը հմբի կազմակերպություններին օժանդակում է դրանցում ռիսկերի կառավարման մշակված չափորոշիչներն ու մեթոդակարգերը մեկնաբանելիս, հարմարեցնելիս ու ներդնելիս: հմբի ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում սահմանվում են հմբի կազմակերպությունների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների աշխատակիցներին ներկայացվող մասնագիտական պահանջները, եւ վերահսկողություն է իրականացվում այդ պահանջներին հմբի կազմակերպությունների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների անձնակազմի որակավորման համապատասխանության նկատմամբ: հմբի մակարդակով ապահովվում է հմբի եւ նրա կազմակերպությունների աշխատակիցների պարբերաբար ուսուցման անցկացումը ռիսկերի կառավարման ոլորտում, ինչպես նաեւ դոնթաք սեմինարների, շնորհանդեսների, կլոր սեղանների անցկացումն աշխատակիցների որակավորման բարձրացման եւ փորձի փոխանակման համար:

հմբի ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում ապահովվում է հմբի եւ յուրաքանչյուր կազմակերպության համար էական ռիսկերի մասին տեղեկատվություն պարունակող ռիսկերի գրանցամատյանների կազմումն ու մշտական արդիականացումը: Ռիսկերի գրանցամատյաններ են կազմվում հմբի յուրաքանչյուր կազմակերպության կողմից եւ դրանց հիման վրա ձեւավորվում է հմբի ռիսկերի միասնական գրանցամատյանը: հմբի ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում ապահովվում է ամբողջ խմբի եւ նրա կազմակերպությունների ռիսկերի փաստական պրոֆիլի մոնիթորինգը եւ դրա համեմատումը ռիսկերի սահմանված նպատակային պրոֆիլների հետ, որոնք սահմանափակումներ են սահմանում ընդունվող ռիսկի մակարդակի նկատմամբ: հմբի ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում ապահովվում է հմբի միագումար ռիսկի ցուցանիշների հաշվարկը՝ ներառյալ հմբի տնտեսական կապիտալի հաշվարկն ու բաշխումը:

Ընդհանրացնելով, նշենք, որ կառավարչական որոշումների ընդունման գործընթացում ղեկավարության խորհրդատվական աջակցությունը պետք է ներառի՝

- որոշումներ ընդունելիս օգտագործվող ֆինանսական մոդելների որակի եւ լիակատարության գնահատումը, այդ մոդելներում օգտագործվող էլքային պարամետրերի ստուգումը, պարամետրերի օգտագործվող էլքային մեծություններից մոդելների հիմնական պարամետրերի հնարավոր շեղումների մեծությունների սահմանումը.

- որոշումներ ընդունելիս օգտագործվող ֆինանսական մոդելավորման արդյունքների վերլուծությունը՝ ներառյալ ֆինանսական մոդելների պարամետրերի, սցենարային վերլուծության փոփոխման նկատմամբ արդյունքների զգայունության վերլուծությունը եւ այլն:

Ներկայացվել է 17.05.2016թ.
Ընդունվել է տպագրության 30.06.2016թ.

1. CEBS High Level Principles for Risk Management, EBA (European Banking Authority)'s Committee of European Bank Supervisors, 16 February, 2010.
2. Principles for enhancing corporate governance, BIS, Working Group on Corporate Governance of the Basel Committee on Banking Supervision, October 2010.
3. Ֆինանսական հաստատություններում ռիսկերի կառավարման ստանդարտները, Միջազգային ֆինանսական կորպորացիա, Հայաստանի բանկերի միություն, 2012
4. Базельский процесс: управление банковскими рисками, В.Н.Вяткин, В.А. Гамза, 2007.
5. Basel Committee on Banking Supervision, Enhancing corporate governance for banking organisations, September 1999. Revised in February, 2006.